

ՄԵՌԵԼՈՑ

Ա.

ՈՂՋ ՄԵՌԵԼՆԵՐՈՒՄ...

... Եւ գիշերներն ալ ինծի մեռելներն իմ կ'այցելեն.
Աւսուածային լրջութեամբ, խորհրդաւոր մեռելներ.
Մինչ՝ գերեզման մը աղուո՛ր՝ յիշատակներն իմ կ'ըլլան,
Որուն շունչին մեծնալու ես իմ հոգին կը բանամ...:

— Մին հոգին է՝ որ ծընաւ իմ բարութիւնը սէրով...
Միւսը ուզեց որ ճիւղիմ, եւ աղեց աչքս փայլուն...
Մէկն ալ ծաղկիլը ուզեց հրպարտութեան մ'ինձմէ՛ ներս.
Ու դեռ ուրիշ մ'ալ շարժեց փափկութեան ջիղն հոգիիս...

Գերեզմանոցը վաղուց ունի սահման մ'ինձմէ՛ ներս.
Բայց մարդ տեսնէ երբ այսպէս իր մեռելներն անոր մէջ,
Ամէն մէկը մէկ մայրի, ամէն շրջուկ հետ մը նոր,
Գերեզմանոցն՝ հոգիի մ'ամբողջ գոյները ունի...

Այցելուներս՝ հիմա, միսէ փրկած հոգիներ,
Այնքան ինծի իրական կը մօտենան մութին մէջ...:
Բայց կը գրգռեմ, կը շոյեմ հոգին որ լուրջ ըրաւ զիս...:

Իմ մեռելներն արցունքով վերածուեցան հոգիի.
Գերեզմանոցը զանոնք ըրաւ խոյրեր սիրազեղ,
Որ հրեռանքով ես իրենց բանամ դուներն իմ ամուր...:

1943

ԱՆԵԼ

ԻՏԷՍԼ

Լոյսը ինչպէս նեփ ներմակ
Շունչըդ է որ այս առօր
Նորէն կը զգամ կը շրջի
Պարտէզին մէջն իմ սրբին
Որուն բնակիլը եղար,
Եւ ուր հիմա երկիւղով
Է որ կ'ուզեմ քեզ պահել
Մասներուն տակ իմ սիրոյս.
Ձի այդ սրբին մէջ քիչ քիչ
Ձը յայտնուած ցաւ մը, միշտ
Իր վերադարձը կ'ընէ...:

ԱՆՏԻՇԱՏ

1943